# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 38-Ն

գ. Անուշավան

14 նոյեմբերի 2014թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԹԻՎ 47-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանին

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի գյուղական համայնքի 2014թվականի բյուջեի հաստատման մասին» թիվ 47-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ Անուշավանի պահուստային ֆոնդ 4891 հոդված 1877600/մեկ միլիոն ութ հարյուր յոթանասունյոթ հազար վեց հարյուր/ թիվը փոխարինել 527600/հինգ հարյուր քսանյոթ հազար վեց հարյուր / թվով:

Օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարում 4251հոդված 0/զրո/ թիվը փոխարինել 350 000/երեք հարյուր հիսուն հազար/ թվով, 4252 հոդված 560 000/հինգ հարյուր վաթսուն հազար/թիվը փոխարինել 660 000/վեց հարյուր վաթսուն հազար/թվով, 4261 հոդված 400 000/չորս հարյուր հազար/թիվը փոխարինել 650 000/վեց հարյուր հիսուն հազար/թվով: Անուշավանի աղբահանություն 4213 հոդված 1 080 000/մեկ միլիոն ութսուն հազար/թիվը փոխարինել 1 280 000/մեկ միլիոն երկու հարյուր ութսուն հազար/թվով:Անուշավանի այլ մշակութային կազմակերպություններ 4239 հոդված 1 250 000/մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար/թիվը փոխարինել 1 500 000/մեկ միլիոն հինգ հարյուր հազար/թվով: Անուշավանի այլ սոցիալական նպաստաներ 4729 հոդված 2 000 000/երկու միլիոն/թիվը փոխարինել 2 200 000/երկու միլիոն երկու հարյուր հազար/թվով:

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Ձեռնպահ-0 Կողմ-5 Դեմ-0

Ռ. Հարությունյան կողմ
Ղ. Ղահրամանյան կողմ
Գ. Վարդանյան կողմ
Ա. Կարոյան կողմ
Մ. Մովսիսյան կողմ

Անուշավան համայնքի ղեկավար Ե. Հակոբյան

14 Նոյեմբերի 2014թվական
գ. Անուշավան